ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

քաղաք Երևան 20.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/230

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 02.11.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.10.2020թ. թիվ 26/26-1/15340-2020 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 02.10.2020թ. թիվ 01/40-212 գրության հիման վրա 22.10.2020թ. թիվ 26/26-1/15340-2020 գրությամբ նախաձեռնել է «Վիոլա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վիոլա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետյալը.

««Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2020/230 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են նախկինում ներկայացված դիրքորոշման հետևյալ փոփոխությունները.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար հայտարարվել է «Լաբորատոր նյութերի» ձեռքբերման նպատակով «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/82» ծածկագրով բաց մրցույթ:

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 75 և 76 չափաբաժինների մասով:

Համաձայն «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/82» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի 24.09.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետի՝ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 28.09.2020թ., կատարել համապատասխան շտկում:

Ըստ նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2020/230 ընթացակարգով Պատվիրատուի կողմից ներկայացված հիմքերում առկա էլ. ծանուցման՝ գնահատող հանձնաժողովը շտկում կատարելու ծանուցումը ուղարկել է 25.09.2020թ., որտեղ նույնպես նշվել է, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Համաձայն «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/82» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.09.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության՝ «Վիոլա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան շտկումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման 24.09.2020թ. նիստի թիվ 2 և 29.09.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությունները հրապարակվել են www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում միայն

06.10.2020թ., այսինքն այն ժամանակ, երբ ընդունվել է պայմանագիր կնելքու մասին որոշում և հայտարարվել է անգործության ժամկետ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել շտկման ծանուցման և արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունների բովանդակության նկատմամբ ներկայացվող գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Մասնավորապես ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետը իմպերատիվ պահանջում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվեն հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն որոշման 43-րդ կետն էլ պահանջում է, որ հայտերի բացման և գնահատման արձանագորթյան մեջ մանրամասն նկարագրվեն արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Մինչդեռ թե՛ ծանուցման, թե՛ թիվ 2 արձանագորթյան ուսումնասիրությունը ուղղակիորեն հետևում է, որ այստեղ ընդամենը վերացական նշվել է, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին և առաջարկվել է կատարել համապատասխան շտկում: Բայց, թե ինչով չի համապատասխանում, կամ հստակ ինչ պետք է շտկվի, գնահատող հանձնաժողովը ինչ շտկում է ակնկալում, այդպես էլ մնում է անհայտ: Ավելին, նման ձևակերպումից անհայտ է մնում նաև այն, թե այդ անհամապատսախանությունը հայտով ներկայացված որ չափաբաժնին է վերաբերում, քանի որ ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 75 և 76 չափաբաժինների մասով:

Սրանով գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ և 43-րդ կետերի պահանջները:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/82» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ և 43-րդ կետերի պահանջները:

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցրել է «Վիոլա» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել տասնյակ տարիների փորձ ունեցող հեղինակավոր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Վիոլա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/230 ընթացակարգի շրջանակներում 06.11.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.10.2020թ. թիվ 01/40-212 գրությամբ հայտնել է, որ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/82» ծածկագրով լաբորատոր նյութերի ձեքբերման գնման ընթացակարգ:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, նիստը կասեցրել է և 25.09.2020թ. Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցել է «Վիոլա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրով ընթացքում շտկել անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից շտկում չի ներկայացվել, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ

հոդվածի 1-ին մասի համաձայն «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/230 ընթացակարգի շրջանակներում 06.11.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/230 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/230 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/82» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի 75-րդ և 76-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Վիոլա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին և որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել Ընկերությանը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 28.09.2020թ., շտկել անհամապատասխանությունները:

3.Պատվիրատուն 25.09.2020թ. ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.09.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «Վիոլա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան շտկումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.10.2020թ. թիվ 26/26-1/15340-2020 գրությունը, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 02.10.2020թ. թիվ 01/40-212 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ

մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին***:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին</u>***

<u>ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/82» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի 75-րդ և 76-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Վիոլա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին և որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել Ընկերությանը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 28.09.2020թ., շտկել անհամապատասխանությունները:

Պատվիրատուն 25.09.2020թ. ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.09.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «Վիոլա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան շտկումը:

Այսպիսով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով սահմանվում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ

կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը***:

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ դրույթները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում Ընկերության կողմից Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատասխանություն, հանձնաժողովի արձանագրության և Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ ընդհանրապես չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերության համար անհասկանալի է եղել, թե կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են առկա հայտի 1.1 Հավելվածում և ինչ շտկում պետք է իրականացվեր:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.10.2020թ. թիվ 26/26-1/15340-2020 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**